Վ. Հ. ՄԵԼԻՔՅԱՆ, Փետրվարյան հեղափոխությունը և Հայաստանը, Ե., 1997, «Մխիթար Գոշ» հրատ., 320 էջ։

Պատմաբան Վահան Մելիքյանը ինքնատիպ քայլ է կատարել՝ իր հետազոտության առարկա դարձնելով հայոց պատմության սոսկ 1917 թ. մարտ-հոկտեմբեր ժամանակահատվածը։ Նորերս լույս ընծայած իր աշխատության մեջ, սեղմելով ժամանակահատվածը, նա ընդգծելով հետազոտության տեսադաշտը և խորացել դեպքերի ընդերքում։ Հայ պատմագրության մեջ առաջին անգամ համակողմանիորեն ու հանդամանորեն լուսաբանվում են տվյալ պատմական փուլում հայ իրականության մեջ ազգային կուսակցությունների ասպարեզ գալու և քաղաքական կողմնորոշման հիմնական հարցերը։ Հեղինակի դրչի տակ ներկայացված հայ իրականությունը բազմակուսակցական է և՛ իր քաղաքական կառուցվածքով, և՛ իր առօրյա հասարակական կյանքով։

Աշխատության մեջ Փետրվարյան հեղափոխությունը բացահայտվում է ոչ թե անցյալի նման, սոսկ որպես Հոկտեմբերյան հեղափոխության նախապատրաստություն ու նախերգանք, այլ նորաձևվող դեմոկրատական պետականության իրականություն։ Հարկ է նկատել, որ հայ պատմագրության մեջ 1917-ի փետրվարի վերջին օրերով սկսված ժամանակահատվածը ներկայացված չի եղել իր բազմակուսակցական և հասարակական դանդվածի բազմերանգ այն շերտերով, որոնք եղել են իրականության մեջ։

Վ. Մելիքյանը իր պաստեառարանված տեսակետն ունի, որը մատուցվում է որպես հետազոտության հեղինակային տեսանկյուն։ Շուրջ մեկ տասնամյակ ուսումնասիրելով 1918 թ. մայիսին Հայաստանի հանրապետության ծննդյանը նախորդած ժամանակահատվածի պատմությունը՝ նա նորովի, ինքնատիպ ձևով է բացահայտում այն իրողությունը, որ 1917-ի փետրվարով սկսված ժամանակահատվածը եղել է Հայաստանի հասարակության տնտեսական, քաղաքական, հոգեբանական շերտավորման այն նախափուլը, որի դեպքերի ընթացքը բաղում դարերի մաքառումից հետո մղել է դեպի հայոց ազգային պետականության վերստեղծումը։ Ըստ էության, այդ էլ կազմում է Վ. Մելիքյանի աշխատության առանցքը։ Ուսումնասիրվող հարցերը թե՛ քանակային կազմով և թե՛ վերլուծման բարձր դիտականության տեսակետից բացառիկ բնույթ ունեն։ Դրանք, ըստ հեղինակի ոչ լրիվ թվարկման, հետևյալներն են. «Հակամիապետական, հեղափոխական-դեմոկրատական շարժումներ, իշխանության, երկիշխանության առանձնահատկությունների, հայ քաղաքական կուսակցությունների գործունեության, միջկուսակցական պայքարի, ազգային զորամասերի, ազգային խորհուրդների ձևավորման, հայկական հարցի, ազգամիջյան հարաբերությունների, ազգային քաղաքական կյանքի և քաղաքացիական պատմության բազմաթիվ այլ հարցեր» (էջ 5)։ Աշխատության տարածքային շրջանակն ընդգրկում է ամբողջ Հայաստանը, այդ թվում՝ Արևմտյան Հայաստանը, Լեռնային Ղարաբաղը, Նախիջևանը, Ջավախքն ու Կովկասի հայաշատ այլ շրջաններ ու քաղաքներ։

Աշխատությունը բավական ինքնատիպ է թե՛ իր կառուցվածքով, թե՛ շարադրանքի ոճով։ Պատմաբանի ջանադիր աշխատանքով հայոց պատմագիտական դրականությունը հարստանում է ինքնակալության կործանման արձագանքների զրավոր այն նյութերի ի մի բերմամբ, որոնք միաժամանակ նաև մեր ազգային պատմության հիշարժան էջերն են։

Հեղինակը ժամանակի դեպքերի մեջ տարբերում է առաջնայինը երկրորդայինից, այն է՝ Փետրվարյան հեղափոխությամբ արդեն կատարվածը և այն, ինչ դեռ կարող էր լինել խմորվող դեպքերով։ Ժամանակի հայ ազգային առաջադիմական, հեղափոխական հոսանքները մտահոգված էին բարոյական տարընթացության այնպիսի գործողությունների կանխմամբ, որոնք ուղղված կլինեին հայ ժողովրդի անկախ պետականության ու զոյատևման պատշաճ ձևերի ստեղծման դեմ։ Այդ և դրան առնչվող այլ հարցերը բացահայտվում են «Հայաստանը ինքնակալության անկումից հետո» առաջին գլխի «Հեղափոխության մուտքը Հայաստան» առաջին ենթավերնագրի տակ։ Նույն գլխի երկրորդ ենթավերնագիրը նվիրված է իշխանության նոր դեմոկրատական մարմինների ստեղծմանն ու գործունեությանը։

Երկրորդ գլուխը 1917 թ. ապրիլ-հուլիսյան ժամանակահատվածի հասարակական-քաղաքական կյանքի պատմությունն է ու վերլուծությունը։ Դրանում կենտրոնական հարցը, ինչպես

տավում է վերնագրում, «Միջկուսակցական պայքարի խորացումն էր»։ Եվ հենց այդ էլ հետազոտվող իրավիճակի ակնհայտ առանձնահատկություններից է, եթե ոչ գլխավորը։ Եվ ինչ ենք տեսնում՝ կուսակցությունների խմորում (ընդամենը երեք-չորս ամիս), և փոխպայքարի՝ մինչ առճակատումը հասնող լարվածություն։ Այդուհանդերձ. հայ հասարակական կյանքը այդ կարճ ժամանակամիջոցում բուռն կերպով, կրքոտությամբ, տեղ տեղ՝ հապճեպորեն, բայց ըստ էության, լրջորեն և հիմնականում՝ անհրաժեշտորեն, տևական ժամանակների քաղաքական ներփակությունից հետո ապրում է կուսակցությունների ինքնահաստատման և միջկուսակցական պայքարի բուռն զարթոնք։

«Միջկուսակցական պայքար» բառերն այսօր մտածել են տալիս. արդյո՞ք տվյալ պատմական պահին, երբ դեռ նոր-նոր խմորվում էր Հայաստանի պետականության ստեղծման դեռևս ոչ լիակատար հնարավորությունը, ժողովրդի հոգսերը այնպես նվազել էին, որ աշխատության մեջ առաջ է մղվում հենց այդ բառակապակցությունը։ Հայ ժողովուրդն իր ազգային հոգսերից բռնաթա՞փ, նվիրվե՞լ է միջկուսակցականին։ Ոչ։ Հայության, մեկ է՝ կուսակցական, թե անկուսակցական կամ միջկուսակցական պայքարը իր հիմքում ու խորքում նախ և առաջ ազգային ազատագրության, հողաթափման ցավերով է մտահոգ և տառապալից։ Հենց այդ էլ փաստերով ապացուցվում է առաջադրված թեման բացահայտող «Ազգային դեմոկրատական ուժերի ակտիվացումը» հիմնական վերնագրի տակ։ Ասել է, թե՝ իրական, անխաթար, լայնախոհ ազգայ'նը չի կարող դեմոկրատական չլինել, ինչպես որ իրոք դեմոկրատականը՝ ազգային.

Հեղինակը հեռու է կուսակցականությունից, աշխատության ոգին ոչ թե կուսակցական մտայնությունն է, այլ անխառն հայրենասիրական մտածողությունը։

Մելիքյանը համամիտ է ժամանակի այն տրամադրությանը, որը ազգայինն ու հայրենասիրականը վեր էր դասում նեղ ազգայնականից։

Դեպքերի վերլուծության այս լայն տեսադաշտում հեղինակի խոսքը հնչում է նաև հայոց եկեղեցու վերաբերյալ, այն է՝ «Հայ հասարակական-քաղաքական կյանքի հունիսյան իրադարձությունների շարքում իր բացառիկությամբ մեզ հետաքրքրում է Հայ եկեղեցական համագումարը» (էջ 101), քանզի «Հայ եկեղեցու պատմության մեջ սա առաջին դեպքն է, երբ եկեղեցական համագումարը հրավիրվում է որպես արդյունք քաղաքական արմատական տեղաշարժերի, տվյալ դեպքում՝ հեղափոխության։ Ավելին, հոգևորականության այդ դաղաթաժողովն իր ներքին կյանքի խնդիրներին զուգահեռ բարձրացնում էր համահայկական հույժ կարևոր հիմնահարցեր, փնտրում էր դրանց լուծումները» (էջ 102)։ Մեզ մնում է ասել, որ գրախոսվող գիրքը առայժմ Հայաստանում գրված այն սակավաթիվ գիտական ուսումնասիրություններից է, որոնցում շարադրվում են ոչ միայն աշխարհիկ, այլև հոգևոր բնագավառի իրողությունները.

Արևելյան Հայաստանի հոգսերն ու ակնկալիքները սոսկ իր նկարագրվածով չեն սպառվում։ Հեղինակը դա հասկանալի է դարձնում և վերլուծում «Փետրվարյան հեղափոխությունը և Արևմտյան Հայաստանը» վերնագիրը կրող երրորդ բաժնում։ Այդ էջերը թեև դարձյալ գրված են պատմաբանի չոր ոճով, բայց հնարավոր չէ առանց հուզվելու ընթերցել ընդհանուր եղելությունն ու արևմտահայության կրած տառապանքի փաստերը։ Պատմական Հայաստանի մայրական օջախից պատերազմի օրերին 300 հազար հայություն է տառապանքի ճամփաներով հասել Արևելյան Հայաստան և դրանից էլ դեպի հեռուները տանող վայրերը։ Բնականաբար, հեղինակը իր ուշադրությունը բևեռել է հատկապես գաղթականության, վերջինիս հիմնահարցերի լուծմամբ զբաղվող արևմտահայ գործիչների՝ Անդրանիկի, Վահան Թոթովենցի, Հովհաննես Թումանյանի, արևելահայ բարեգործական, հասարակական կազմակերպությունների գործունեությանը։ Պակաս կարևոր չէ գաղթականության խնդիրներով զբաղվող արևմտահայերի առաջին համագումարի աշխատանքների լուսաբանումը, որի ընթացքում դրսևորվեց գաղթականական խնդիրը քաղաքական լուծման առարկա դարձնելու և հայ հասարակայնությունը պառակտելու արատավոր երևույթը։

Այդպիսով, հեղինակը խորացնում է արևմտահայ կյանքի իրադարձությունները Արևելյան Հայաստանի պատմության հետ գրավոր տեքստում ի մի բերելու, միասին քննարկելու աշխատանքը։ Բնականաբար, դա իր հետ բերել է՝ 1. նոր մոտեցում իրադարձությունների նկատմամբ, 2. արևելյան և արևմտյան հասարակական շարժման համադրում և 3. դրանց վերլուծություն, որպես ամբողջական, այլ ոչ տարանջատ պատմություն։ Այս ամենը, բնականաբար, հանգեցրել է նրան, որ հեղինակը իրեն պարտավորված է զգացել նորովի, անկեղծորեն բա-

ցատրել 1917 թ. ապրիլի 25-ի Թուրքահայաստանի մասին Ռուսաստանի ժամանակավոր կառավարության ընդունած որոշումը։

Կիրառական նպաստ բերելու տեսակետից արդասավոր են «Պետրվարյան հեղափոխությունը և Հայկական հարցը» վերջին գլխի՝ հայ քաղաքական բոլոր կուսակցություններին ու հոսանքներին վերաբերող թեմատիկ ենթաղլուխները, իր գիտական աշխատանքի արդյունավետությունը որուշակիացնելու նպատակով գրանցում հեղինակը առանձին-առանձին վերլուծում է Հայկական հարցի նկատմամբ ազգային լիբերալ-դեմոկրատական, ազգային-դեմոկրատական, սոցիալիստական կուսակցությունների վերաբերմունքը, նկատում է և՛ որոշակիորեն առանձնակի տեսակետներ, և՛ համընկնող դիրքորոշումներ, և՛ հակասական, իրարամերժ կողմնորոշումներ։

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում կան պատկառելի տարիք ունեցող ավանդական կուսակցություններ ու նաև այնպիսիները, որոնք անցյալում հայ իրականության մեջ գործած կուսակցություններից մեկի կամ մյուսի հետ դիրքորոշման ընդհանրություններ ունեին։ Աշխատության շրջանակներում, անշուշտ, նշված կուսակցությունների գործունեության վերլուծությունը չէր կարող սպառիչ լինել, բայց դրանում անպայման կան անցյալի հետ ներկայի շփման բևեռներ, նաև հնարավոր խորհուրդներ ու պատմության դասեր։ Թվարկենք միայն կուսակցությունները՝ Հայ ժողովրդական կուսակցություն, Սահմանադիր-ռամկավար կուսակցություն, Հայ հեղափոխական դաշնակցություն, Զորավար Անդրանիկի «Հայաստան թերթը՝ որպես Կովկասում ապաստանած արևմտահայ դաղթականության շահերի արտահայտիչ, Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցություն, Սոցիալիստ-հեղափոխականների հայկական կազմակերպություններ, Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպություն («սպեցիֆիկներ»), Սոցիալ-դեմոկրատ մենշևիկների, մենշևիկ-ինտերնացիոնալիստների տեղական կազմակերպություններ, Բոլշևիկյան կուսակցության տեղական կազմակերպություններ և այլն։

Աշխատության վերջում հեղինակը վերլուծում է Հայոց ազգային բյուրոյի և հայկական հոսանքների խորհրդակցությունում Հայկական հարցի քննարկումները, դաշնակցության նկատմամբ ընդդիմության ձևավորումը, ազգային գրամասերի, Հայոց ազգային խորհրդի ստեղծման նախապատմությունը և այլ կարևոր հարցեր։

Թերևս կարելի էր ավելի լայն տեղ տալ կուսակցությունների ծրագրերի ու քաղաքական կողմնորոշման համապրմանը։ Դա ավելի ցայտուն կդարձներ աշխատության նյութի ու վերլուծության այժմեականությունը։

Վահան Մելիքյանը նոր սերնդի պատմաբաններից թերևս առաջինն է, որ վերադառնում է 1917 թ. հիմնահարցի հետազոտմանը և, մեծապես օգտվելով մեր ժամանակի աղատություններից, գիտական ու համապարփակ աշխատություն է ներկայացնում իր ընթերցողին։ Էական արժանիքներից է հարուստ և բազմազան աղբյուրագիտական հենքը։ Աշխատելով Երևանի, Թբիլիսիի, Մոսկվայի, Պետերբուրգի տարբեր արխիվներում՝ օգտագործել է ժամանակի գրեթե ամբողջ մամուլը, բնական մոտեցում է հանդես բերել նախկինում լույս տեսած գրականության նկատմամբ, շմոռանալով նաև ըստ արժանվույն գնահատել նրանցում եղած գրականը։ Իր նպատակի եղրակացություններով, գիտական ամբողջականությամբ այս գիրքը կմնա որպես քննարկված հիմնախնդրին վերաբերող ակնառու ուսումնասիրություն։

Հ. Ն. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր